# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## <<ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (*Կ-439-10.01.2020-ԱՍ-011/0*) ԵՎ <<ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ (*Կ-439[1]-10.01.2020-ԱՍ-011/0*) ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| N | Առաջարկի հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը | Առաջարկը (փոփոխությունը, լրացումը) | Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը | Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 1. | ՀՀ Կառավարություն | **<<ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>** (*Կ-439-10.01.2020-ԱՍ-011/0*) | Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետ 04.03.2020թ. երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է «Լուսավոր Հայաստան» խմբակցության կողմից ներկայացված՝ ««Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (Խ-326-25.10.2019,13.01.2020-ԱՍ-011/2ամբ.), որով արդեն իսկ փոփոխություն է կատարվել «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասում: Մասնավորապես, օրենքի՝ խնդրո առարկա դրույթը առաջին պարբերությունից հետո լրացվել է հետևյալ պարբերությամբ. «Հայաստանի Հանրապետությունում գտնվելու փաստը բանկի կողմից կարող է հաստատվել նաեւ առանց կենսաթոշակառուի բանկ ներկայանալու՝ Կառավարության սահմանած կարգով:»:<br>Ըստ այդմ, առաջարկվում է՝<br>1) «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծից հանել 1-ին հոդվածի 2-րդ կետը, իսկ 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.<br>«Հոդված 4. Օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «(բանկ չներկայանալու)» բառերից հետո լրացնել «կամ Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկի կողմից չհաստատվելու» բառերով, իսկ 4-րդ մասի 3-րդ կետում «(բանկ ներկայանալու)» բառերից հետո լրացնել «կամ Հայաստանի Հանրապետությունում լինելը հաստատվելու» բառերով:»: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 2. | ՀՀ Կառավարություն | **<<ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ** | «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածով առաջարկվում է օրենքի 55-րդ հոդվածը | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>** (*Կ-439-10.01.2020-ԱՍ-011/0*) | լրացնել 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ մասերով, ըստ այդմ, առաջարկվում է հոդվածի 9-րդ, 10-րդ և 11-րդ» բառերը փոխարինել «9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ» բառերով: | | |
| 3. | ՀՀ Կառավարություն | <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին>> | Նախագծերի փաթեթ ներառել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով օրենսգրքի 928.9-րդ հոդվածի 4-րդ մասը կհամապատասխանեցվի «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասում կատարված լրացմանը: | Ընդունվել է: | Ընդունվել է: |